

№ 62
P. 12.00
8-9 V

ՏԱՐԻ

ՇԱՐՄ 17 ՆՈՅԵՄԲԵՐ 1901

Թի 369

ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹԻՒՆ
Պոլիարիոյ համար
Տարեկան 12 ծր.
Վեցսնեայ 6 »
Արտասահմանի հա-
մար Տարեկան 15 »
Վեցսնեայ 8 »
Անտիկաշի համար
Տարեկան 3 ծր.
Վեցսնեայ 1.50 »
ՎԱՆՈՒԹԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ
Իրանացան սոյր սուպին
էրեսին համար 40 սակրի.
Է. իսկ վերջին արեսի հա-
մար 20 սակրի է. երեքին
աւելի սակրակերու համար
20 ՍԱ զեղջ կրչայ):
Վառնայի համար ձեռք 10 սակրի

ՇԱՐՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿՐ ԶՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ԶՈՐԵՔՆԱԳՐԻ ԵՒ ՇԱՐՄ ՕՐԵՐԸ

Նախկին և նորագոյն
Խմբագրութեան հասցի
—
Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)
Իրաքիւնի և չեկ-սրուի
Արտասահմանի ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պոլիարիոյ համար ձեռք
— 15 ՍԱՆԹԻՄ —

ՇԱՐՄԻՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՐԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՆԵՐԸ

ՀԱՌԱՉԱՆՔ

Միևն խոսի ևրկին ձեռու շակր սրոս,
Գնո խոս կը ևրիկէրո՛յ, ձեռի իւր հոգին.
Ու հանդէպ հայու ցաւին ևրոնոսին
Հառաջ խոսչոս
Ուրիւն վեհերոս:

Պր փչէ դձեկ ևրիսի ցուրս հոգի,
Խանձերով ծաղիկ, չո՛յր, հոգիս ու դաշ,
Զի ազաւս կեանքի բշակին սևհաշ,
Փոնց սևոյրով
Թեւերը չորս կոյով:

Ու զայրանայ ծով, սև յոյզեր ունի,
Բայց ո՛չ լուռ, քախձոս իւր յոյզերուս պիւ,
Հառաջակ մը գուր — յիս յոյսակին վիւ,
Հոգոյս ևրիւնի—
Զեր խոնջ ձեռունի:

Սասիկ է, իրաւ, կսկիծու երբ որ
Կը յիշել արտի դառնութեանը, խոկուն,
Ցաւերը բոյր,
Ի. և դժբաղդ կոր:

Բայց չընիւն ևս խանդ, զիւնուիւն սևիւնակ,
Ու փոխան քաղցի դիւ կուսի տկուն,
Կը խոյի իւր ջակի
Մի խո՛ր հառաջակ:
Վառնա 15 նոյս. ՎԷՏՍ.

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Անշուշտ մեր չը վճարող բաժանորդները, եթէ փոքր ինչ պարտաճանաչութեան զգացմունք ունին, կարգացին մեր նախորդ ազգերը որոնցմով կը յայտարարուէր թէ չը վճարող բաժանորդներու անունները պիտի յայտարարուի Շարժումի մէջ: Գանուեցան բաժանորդներ որոնք շտապեցին իրենց պարտքը վճարել. իսկ մէկ կարեւոր մասնալ գեռ արձագանք չը տուաւ. Հիմա այդպիսիներուն կը յայտարարենք որ իրենց ժամանակ կը տրուի մինչև զեկտ. 15ը: Մինչև այդ օրը պիտի սպասենք. ու այնուհետև իսկոյն պիտի հրատարակենք:



ԱՆԻՃԱՆԻ ՄԱՅԸ

Նոյեմբեր 9/22ին Վենետիկի Միսիթարեան վանքի մէջ, կարճատեւ հիւանդութիւնից յետոյ իր հոգին աւանդեց հայր Ալիշանը 81 տարեկան հասակում:
Աւրեմն այլևս գոյութիւն չունի այն մարդը, որը կէս դար շարունակ ոգեւորեց հայ ժողովրդին վերակենդանացրեց հայկական հնութիւնները իր ճկուն գրչով, հայրենասէր սրտով ու նուրբ մտքով:
Ալիշան, նահապետ Բաբկէն անունները ո՞ր հարազատ հային չեն ծանօթ:

Ալիշանը իրիտասարդ հասակում հայրենասէր ըմբոստ բանաստեղծ էր. իսկ տարիքն առած միջոցին հայրենիքի մեռած հնութիւններին, կենդանութիւն տուող հայրենասէր գիտնական գեռ կէս դար առաջ, Միսիթարեան պարզ վարդապետը թէ երգում էր իր աւերակ հայրենիքը և թէ յոյս էր ներշնչում նրա ապագայի մասին:

Մտաբերեցէք նրա գրչի արտագրութիւնը՝ երկու Մասիսներէ խոսակցութիւնը, Յիշեցէք մեծ Մասիսի պատասխանը փոքր Մասիսի լուրջ, յուսահատ, պաղ ու ցուրտ դատողութիւններէ հանդէպ: Տեսէք մտաւարակէս ինչ է առում չը յուսահատված, հալոթեան ապագային հաւատացող մեծ Մասիսը:— Սարուկ, մի նայիր եմ կատարիս վրայ գտնված մշտական սառուցին, մի քիչ էլ պատկերիր, մտիր կուրծքիս մէջ տես այն տեղ դժոխքի ի՞նչ քիւթիւններ են այրվում: Այն կրակը որ նստումս վառեց, ոչ ոք չի կարող մարել, մի կայծը բաւակուն է հրդեհելու համար: Երբ մի օր կատարեմ, տես ինչ շիկուցած քարեր կը նետեմ գրացի լեռներին, բոլորիդ էլ Արարատեան դաշտին կը հաւաներեցնեմ: Եւ եթէ մի օր այդ նշանը տեսնես իմոցիր որ Հայաստանի վերականգնումը մտն է:

Այս սողերը որոշ կերպով մատնացոյց են անում թէ վարդապետ Ալիշանը 19րդ դարի մեռած հայութեան առաջին աղաւթասէր, ըմբոստ հրաբուխային ներկարագիր ունեցող կրակ ու բոցով ազատութիւն ձեռք բերելուն հաւատացող քարոզիչ բանաստեղծըն է:

Դժբաղդաբար Ալիշան իր իղձերը իրագործված չը տեսնելով մեռաւ: Սակայն նա մի գլխաւոր փաստ տեսաւ. իսկապէս հայ ժողովրդի ստացապատ կրծքի տակ հրաբուխային կրակը գոյութիւն ունի. նրա նշանները երևացին նա համոզվեց որ այն կրակը, որ նստումս է վառել, ոչ ոք չի

կարող մարել, նա տեսաւ որ նոր կեանք ստեղծելու համար խարխուլ հոտած հնութիւնը հրդեհուց, լափող հրդեհի համար կայծեր շատ կան հայ ժողովրդի մէջ, և վաղ թէ ուշ այդ հրդեհը պէտք է բռնկի:

ՎԱՐԴՕ

ԵՐԿՈՒ ԽԵՆԹԻՆ ՄԷՆ ԽԵՆԹԻՆ
ՄԸՆ ԵՆ ԴՐԵՐ

Սոյն առածը իբր վերնագիր գործածելու չիկար աւելի յարմար ժամանակ:
Աշխարհիս մէջ եթէ երկու խենթերու հանդէպ խեղճ մը գոյութիւն ունեցած չըլլար մարդկային ընկերութիւնը այսօր անասնական ու շատ աւելի ստորին, շատ աւելի խայտառակ դիրք մը ունեցած պիտի ըլլար ապահովագէտ:

Գանք բուն խնդրին:
Ատենէ մը ի վեր Բարիկի մէջ փառայելի հայ եկեղեցի մը կանդանելու սեւեռուն գաղափարը բոյն դրած է քանի՞մը շոջ հարուստներու ազբատ խելապատահին մէջ Աղքատ ըսի կարծեմ բնաւ չեմ սխալիր քանի որ ասիկց աւելի ողորմելի ծրագիր մը կարելի չէ երեւակոյել: Եթե անտես ութսուն հազար ոսկի ծախսել Բարիկի պէս բաղմածախս քաղաքի մը մէջ մանաւանդ որ ամբողջ հոլոթիւնը սուգի ու ցաւի մէջ կը հեծէ ընդհանուր իրաւացի ծաղրանքի առարկայ ըլլալէ զատ ուրիշ բանի չի պիտի ծառայէ երբէք: Ո՞վ Աստուած, մինչև ե՞րբ կուրութիւն մինչև ե՞րբ անտարբերութիւն մեր ազգային ցաւալի կացութեան նկատմամբ: Ի՞նչ կը կարծէ մեր հարուստ ու գրամատէր դասակարգը. կը հաւատայ անշուշտ թէ որովհետև ուրիշ ազգեր Բարիկի մէջ փառաւոր աղօթատեղիներ ունին ուրեմն եթէ մենք ալ ունենանք ամէն բան իր կարգին պիտի ըլլայ ու մեր հայրենիքի ազեկուոր

ՉԷՁՈՔԻ ԲԱՆԱԿՑՈՒ- ԹԻՒՆԵՐԸ

ՆԱՄԱԿ ՇԱՐԺՈՒՄԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ



լաց ու կոծերը այլևս պիտի
դադարին ու թուրք բռնակալ չմ-
տնան ու իր վատ մեղսակիցնե-
րուն Հայաստանի նկատմամբ մը-
շակած չարաշուք ծրագրերն
նպաստաւոր պիտի դառնան մեզի
համար ու հայերուս արժանա-
պատուութիւնը փրկուած պիտի
ըլլայ . է՛հ ալ հերիք է խաբ-
ուեցանք մեր ծիծաղելի միա-
մտութեանը մէջ :

Եւրոպայի մէջ կապրինք, գոնէ
իրարու օգտակար ըլլալու եւրո-
պական դրութիւնը ուսումնասի-
րենք փոխանակ սնտոի փառամո-
լական երազներով մեր միտքը ու
դործելու եռանդը կաշկանդելու :

Եկեղեցի մը ունենալ կը հաս-
կնամ, յատուկ աղօթատեղիի մը
տէր ըլլալ շատ լաւ կը մտնեմ
բայց բնաւ չեմ հասկնար եօթա-
նասուն աթոռն հազար ոսկիի որ
մեզի համար շատ մեծ գումար
մըն է ծախսուիլը . Այդ
եօթանասուն հազարը «պա-
գային համար անակնկալնե-
րու գէժ՝ շատ կոկիկ պատ-
ուար մը կրնայ ըլլալ ու այդ
պատուարը քմահաճոյքի յախու-
նն տպուորութեան տակ ջնջել
քանզի ահաւասիկ խնդրին ա-
մենէն ախուր կողմը :

Հոն Հայաստանի մէջ անօթի
անսուղ մեր հայրերը, մայրերը
եղբայրները և քոյրերը տարա-
պայման անձկութեան մէջ, ա-
զատ լերկրի մէջ օդ շնչող
հայրենակիցներէ . արդար ա-
կնկալութեամբ օգնութիւն կը
սպասեն մինչդեռ բազմաժախս
ու մեծահարուստ մայրաքաղաքի
մը մէջ եկեղեցի մը շինելու
ծրագրովը կը զբաղինք, փոխանակ
մեր մարտիրոսացած ու տառա-
պած արեւնակիցներուն իրական
ու գովելի օգնութիւններ հաս-
ցնելու :

Սթափինք ու չորս բանանք
աչքերնիս հասկնալու համար թէ
մեզմէ առաջ մեր այս վիճակին
ենթարկուած ժողովուրդներու
հարուստ դասակարգը ի՞նչ մի-
ջոցներ գործածած է մայր հայ-
րենիքին օգտակար ըլլալու .
Ահադին ծախսերով եկեղեցի
մը շինել մանաւանդ արդի տխուր
պարագաներու մէջ բնաւ պար-
տականութիւն չէ մինչդեռ ընդ-
հակառակը . մեր գծադր հայ-
րենիքին պաշտօնակալ օգնելը
սրբազան ու անվիճելի պարտք
մըն է մեզի համար :

Մենք զմեզ յարգենք ու սի-
րենք . յետոյ ուրիշներէն համակ-
րութիւն սպասենք :

Վ. ՊԱՂԱՒ

Բարիկ 2 նոյ.

Կը խնդրենք ձեզմէ ալ, ինչպէս որ
«Հայրենիք» և «Ձայն Հայրենեաց»-
է որ սեղ մը շնորհէք ինձ պատմելու
համար երկու կուսակցութեանց հետ
ունեցած բանակցութիւններս միու-
թեան մասին :

Իբր յառաջարկ բացատրութիւն
մը կը պարտիմ :

Պէտք է յայտնեմ թէ ինչպէս եղաւ
որ համար ձ ա կ ու թ իւ ն ունե-
ցայ ինքնաբեր միջնորդ մը ըլլալու ի-
րենց միջեւ : Արդեօ՞ք ունէի մէկ քա-
նին այն անձնական հանգամանքներէն
որ հնարաւոր և կարելի կրնային ընել
բարեսու միջնորդի դերս : Մէկ խօս-
քով երկուքին ալ վստահելի էի արդ-
եօք :

Այս հարցմանս իբր պատասխան,
գիտէի թէ երկու կուսակցութիւններէն
մին պիտի նկատուէր ժամանակով ի-
րեն թշնամի մը . իսկ միւսը լաւա-
զոյն կարծիք մ'ունէր իմ մասին արդ-
եօք : Այս երկարութիւններս պիտի
գիւ ետ կեցնէին միջամտելէ, եթէ
ստացած չը լինէի հետզհետէ հետեւեա
նամակները :

24 հոկտ. 1898

« . . . Ձեր վայելած մեծ համբաւը,
որուն իրաւամբ այսքան արժանի էք,
մեծ հաւատք ներշնչեց ժողովին իբր
թարգման ամբողջ կուսակցութեան,
որ պիտի կարենաք հայ ազգին այս
ծանր ճգնաժամին նշանաւոր ծառա-
յութիւններ մատուցանել ազգային
փրկութեան Դատին, իբր ղեկավարել
մը շնչակեան կուսակցութեան . . . »

Ղևոնդ . . . Կ . Փ . Փափագեան
« . . . Շատերը գիտեն թէ մէկը
դնելով ձեր հին գործնէութիւնը ու
միայն վերջի տարիներուն մէջ դուք
անձնական ինչ մեծ գործութիւններ
ու յանձնառու եղաք Ազգին մտաւո-
րական առաջնորդ մը հանդիսանալու
համար : Ձեր դրամը, ձեր բարեկե-
ցութիւնը, ձեր հանգիստը գործելիք
ընդհանուրին համար . . . »

Ղևոն Մկրտիչեան

Լոնտոն 4 դեկտ. 98

« . . . Կրնդունի՞մ մեր կուսակ-
ցութեան մէջ Ատենապետի, այսինքն
«չէֆ»ի պաշտօնը ստանձնել, թերթե-
րու խմբագրութեամբ . այս պարագա-
յին իս բողոքովին կը քաջուրիմ . . . »

Ա. Արփիարեան

Աղէքսանդրիա, 25 դեկ. 98
«Եթէ Արփ. յաջողի Ձեզ համոզել որ
տանկ պաշտօն մը ստանձնէք, մենք
ամէնքս ալ շատ սուրբ կը լընքու պ .
Արփիար ալ կուսակցութեան երախ-
տագիտութեան կ'արժանանայ . . . »

Ղևոն Մկրտիչեան

Ահաւասիկ յեղափոխական քնարի
մը է՛ն անուշ ձայները : Ո՛ւ է մար-
դու մը դժուար պիտի ըլլար երեւակա-
յիլ հրաւէր մը, առաջարկ մը, որ
ասկէ աւելի պատուաբեր և հրապուրիչ
ըլլար :

Ես մերժեցի Բայց ամէն ոք կար-
դաւով այս նամակները պիտի արդա-
րացնէ զիս այն համար ձ ա կ ու թ
թ ե ա ն համար զոր ունեցայ միջնորդ
մը ներկայանալու հնչակեաններուն,
ինքնաբերաբար . միութեան համար :
Եթէ երկու մ'ունէի, այն ալ դաշ-

նակցականներէն էր : Ատենք պիտի
ըլլան, կըսէի ինքնիրենս, այն տն-
դրուելի ժայռը, քարի նման խօսք չը
հասկցող այն կուսակցութիւնը, սրուն
վրայ չի պիտի կրնամ տղեղ ոչ մի
կերպով, ինձ չի պիտի վստահին, ո-
րովհետեւ յարգանք մը չունին իմ ան-
ձիս :

Բարեկամ մը, որուն հաղորդեցի
տոյ երկիւղներս, յանձնառու եղաւ
թռչիլ երթալ ժրնէ՛վ, դաշնակցական-
ներուն տրամադրութիւնը հասկնալու
համար, և ինձ անկէ գրեց :

Ժրնէ՛վ 9 յունւար 900

« . . . Տեսնեցայ . . . հեա Միա-
ցու մի գործին կարեւորութիւնը,
բարձրութիւնը ու անհամեմատ օգ-
տակարութիւնը իրենք միշտ կը խոս-
տովանին : ու թէպէտեւ այս պահուս
չատ լարած կը տեսնեն երկու կողմի
յարաբերութիւնները, այսու հանդերձ
կը հաւանին ձեզի հեա բանակցիլ .

«Ինձ հարցուցին թէ կարելի է ձեզ
հոս հրաւիրել : Նկատելով որ վերա-
ւորիչ բան մը չըկայ ձեզի համար հոս
դաւով, և միւս կողմէ իրենք հաս-
կցան որ միութեան նորոգ գաղափա-
րը ձեզմէ և ինձմէ կը ներկայանայ ի-
րենց և ոչ թէ հնչակեաններէն, հե-
տեւաբար, ամէն պարագայի մէջ,
սպագայի տեսակէտէ ալ վնաս մը չկայ
ձեր հոս դաւովը այս կամ այն կու-
սակցութեան, ես խոստացայ ձեր կող-
մէն . . . »

Դաշնակցականներուն դէմ կասկա-
ծոտութիւնս ոկսաւ քիչ մը նուազել
այս նամակին վրայ :

Այդ միջոցին Իտալիա էի, և պն.
Արփիարէն խնդրած էի որ Լոնտոնէն
եկելով ինձի գայ : Միտքս էր նախ
իմին հնչակեաններուն հետ կարծիքնե-
րու փոխանակութիւն մ'ունենալ : Պն.
Արփիար չեկաւ և ինձ գրեց :

« . . . Կացութիւնս այս ըլլալով,
կ'զգաս թէ օրքան կը ցաւիմ տեղս
անչարժ մնալու հարկադրած ըլլա-
լուս . . . »

Ա. Արփիարեան

Այս հանգամանքներուն մէջ, ինձ
կը մնար թէ մեկնին և թէ միւսին ոտ-
քը երթալ, —ինչ որ ըրի նախ ժրնէ՛վ
և յետոյ Բարիկ ու Լոնտոն մեկնելով,
ուր օրեր և շաբաթներ անցուցի մի-
ութեան հարցին վրայ վիճարանելով :

Մեծ մտահոգութիւնս եղած էր թէ
ինչ լեզու պէտք էր որ գործածէ՛լ
իրաքանչիւրին հետ, Հարկ էր, զի-
րենք գրաւելու և սիրաշահելու համար
գրաւտել և ներքողել, ըստ Արեւելեա-
րութեան : Հարկ էր, ընդհակա-
ռակը, չվարագրուել իրենցմէ և ոն
մէկ պակասութիւններին : Մէկ խօսքով
պէտք է՞ր որ աչք գոցէի իւրաքան-
չիւրին իսկական վիճակին վրայ : Այս-
պէս վարելով, պիտի ստած ըլլայի .
և սուտը հիմ ընելով միութեան պիտի
չինէի խախտու շէնք մը, աւաղի վրայ :
Այս խորհրդածութեամբ, որոշեցի
խօսել ամէն մէկին ոչ թէ իր անգրեւ,
այլ քննադատելի կողմերուն վրայ,
խորշելով միւս կուսակցութիւնը իր
առջին պգտիկցներէ, էհականը վերջա-
պէս մէկ բան էր, այն էր որ իւրա-
քանչիւրը անկեղծօրէն անդադառ-
նար իր թերութեանց վրայ :

Քննադատը չի սիրուի, այս է յայտ-
նի, և բարեկամս որ գիտէր նպատակա-
ինձ կը գրէր .

« . . . Ժրնէ՛վին եկան . . . հետ եր-
կար տեսնեցայ : Ստիպեցայ ձեր ըն-
թացքը բացատրել, թիւրիմացու-
թիւնները շնչելու համար, թէ սրբան
խիտ գտնուած էք իրենց նկատմամբ,
նոյնքան և աւելի հնչակեաններու
հանդէպ . . . »

Կարեւորագոյն խնդիր մըն ալ այն էր
թէ ո՞ր տեսակէտէ նայելով պէտք էր
որ միութեան պայմանները գծէի,
արդեօ՞ք կուսակցութիւնները հաշ-
տեցնելու տեսակէտէն միայն : Որով-
հետեւ երկուքը կրնային հաշուի և
իրար արդիւնք իրար զիրար նոյն իսկ
տկարացնել, և կամ առանց քայլ մը
ընել տալու Յեղափոխութեան, որ,
ալ այսուհետեւ, ըլլալու է Ազգային
հաստատութիւն մը, միակը որ պիտի
կրնայ Ազգը արգիլել ինքզինքը ուրա-
նալէ, ինքզինքը մոռնալէ :

Այս հարցերուն մտադիր ըլլալով է որ
նշանակեցի այն ինը պայմաններն ո-
րոնք հիմայ ծանօթ են ամենուն :

Ո՞ր լուրջ հայր կրնար մտքէն ան-
ցընել որ Արփիարի խնդիրը՝ ըստած
վէճը ճամբուս վրայ խոչընդոտ մը պի-
տի հանէր հնչակեաններուն կողմէ :
Խենթ մը հորը քար մը նետեց, կըսէր
Նաորէտին Լօճան, քոտուուն իմաս-
տուն չուրժը բոլորելով չը կրցան հա-
նել, ճիշդ այս էր : Դաշնակցականնե-
րուն գնդակով իսկ վերջի վերջոյ պա-
տուհասուած թրքահայ մը կը շինէ
կեղծ թղթեր, ու կաւրաստանէ պն.
Արփիարը իբրև ժառանգիլ, կը յաջողի
խաբել սա ու ան, կ'ստործէ անոր դէմ
տեսակ մը հանքային կարծիք—սխալ—
որմէ կը պաշարելն շատ մը ուղղամիտ
և ազնիւ թրքահայեր և ուսուսանայեր,
ճիշդ ինչպէս Տրէյֆուսի պարագային
մէջ խաբուեցան շատ պատուաւոր
Ֆրանսացիներ, և կուսակցութեան
խնդիր մը որ ուրակակնի պէս առջևս
եկաւ տեղեկցաւ, ամէն մէկ քայլիս :

Ինձ թող ներուի հոս առաջ բերել
ժրնէ՛վցիներուն հեա ըրած բանակ-
ցութեանց օրագրէն մասը :

« . . . Պ. յայտարարեց որ պիտի չա-
րուակեն Յաւելու ուժին մնացորդ մա-
սը հրատարակել, առանց ընդհատելու,
առանց յիտաձգելու : Ես դիմադրել
առաջարկեցի մերժուեցաւ : Դիմելի տեի
թէ սխալ մըն է որ կը գործածեն,
յարձակումները շարունակելով նոյն
այն րոպէին որ ես հաշտեցնելու կաշ-
խատիմ : Զիջում չըրին :

Նիստէն միկնեցայ այն կարծիքով
որ այլ եւս կարելի չէ բանակցիլ : Բայց
հետեւեալ օրը, ըրի սա յայտարարու-
թիւնս : Ես ձեզ թող կուտամ շարու-
նակել ձեր յարձակումները Յաւել-
ու անով, բայց միայն այն պայմանով
որ պ. Արփիարին իրաւունքը ճանչ-
նաք իր խնդիրը հանելու միացեալին
ստեղծանայ դատարանին տուջեւ, որուն
կազմուիլը իբր պայման կառավարեմ
անս : Պատասխանեցին թէ արդէն դա-
տաստան եղած լինցած է այդ հարցի
վրայ Պոլսոյ կոմիտէի կողմէ . . . »

Այսպէս բաղխեցայ զօրաւոր ընդ-
դիմութեան մը : Զգացումս սակայն
այն էր որ ընդդիմութիւնը չի պիտի
վաւերացուէր անխորաբար, ոչ բոլոր
դաշնակցականներէն ոչ ալ հանրային
կարծիքէն : Հարկ էր որ ասոնք գոր-
ծին միջամտելի իրենց աննախապա-
շարեալ ուղղամտութեամբ : Այս մի-
ջամտութիւնն առթելու համար, խրմ
բազրեցի և հրատարակեցի այն նամա-
կը որ ստորագրուած էր Իսկէնտէր
և Յակոբեան : Այս մասին ստացայ
հետեւեալ գրերս :

Ժրնէ՛վ, 3 ապրիլ 900

« . . . Գաջ տեղեկ լինելով մեր տը-
րամադրութեան, դուք չը պէտք է
պիտանիք բարձրացնէք դատին հար-
ցը . . . Մենք անկարող ենք մեր ըն-
կերներին առաջ պաշտպանել մի բան
որին հակառակ էինք ինքներս . և
միւս կ'ըզից, դուք հրապարակաւ մեզ
դէմ առդէմ էք կանգնեցրել կողմակի
Բ .

անձնաւորութիւնները եւ դուք միշտ մտքովն մըջն էք կամենում մնալ։ Այսուամենայնիւ կը տպագրենք պիտակներն եւ Յակոբեանի նամակը։

Արեւմտեան Բիւրօ

Ժրնէվ, ուրեմն դժգոհ էր։ Բայց գործադրած միջոցս, այսինքն հանրային կարծիքին միջամտութիւնը ներգործեց դաշնակցականներու մեծագոյն մասին վրայ։ Եւ յիտակը, աւելին չէի կրնար սպասել կուսակցութենէ մը որ մ'նչեւ ցայն վայր անքան հակառակ էր դատի կէտին վրայ զիջումը ներու։ Ահաւասիկ այս շատ գովելի եւ պատաւաբեր զիջողութիւնը ծանուցանող նամակը։

Ժրնէվ, 31 յուլիս 900

«... Դաշնակցութեան կամքը արտայայտող մարմինի որոշումը պատուոյ ատենանին մասին ամփոփում է հետեւեալ կերպով. մերժել արդէն տրւած միութեան հարցից դուրս անհաստատելի խնդիրներով զրադելու ստալարկը, ինկատի ունենալով որ միութեան պայմաններում պատշաճ տեղ է արւած երկու կողմի ամբաստանալիքի համար հիմնելիք դատարանին...»

Արեւելեան Բիւրօ

Արդիւնքն ակներեւ էր այլեւս. Դաշնակցութիւնը կը մերժէր եւ իրաւամբ, անհատով մը զբաղելու, բայց կընդունէր որ միութեան պայմաններէն մին ըլլար դատարանի մը կազմութիւնը, որուն ենթարկէր պ Արփիարին խնդիրը, ինչպէս ուրիշ ամբաստանեալներ, եթէ կային, ձիջաւորակածս էր։

Բոլոր այս ժամանակին ուր դաշնակցականները կիրառործին զգալի բարեշրջում մը կը մտնէին զիջողութեանց փուլի մը մէջ, հնչ. կեդրոնը իր 5 կամ 7 անդամներով ուրիշ րան չէր ըսեր ինձ բայց եթէ Հոսով պայման ձեռնարկուի ինչպէս էր դարձած «Ոչ կարելիք», non possumus.

Ահա այս կէտին վրայ անոնց ունեցած թղթակցութիւնս.

Աղեքսանդրիա, 15 մայիս 900

«... Յաւելածին հրապարակ հանուելէն վերջը հարկաւոր տնտեսական է նախ նախատինքը բարել, յետոյ միութեան մասին խորհիլ։ Երկու գործը զուգընթացաբար չի կրնար կատարուիլ...»

Կեդր. վարչութիւն

Լեոն Բագրևաշու Ապահուելի

Պոսթոն, 17 սոսա. 900

«... Ես կը մտածեմ թէ դուք սըխալ մը ըրիք ձեր նախնական առաջարկին մէջ Արփիարին անպայման հետացումը պահանջելով, քանի որ առժամեայ դատարան մը երկու կողմի ամբաստանալիքները դատելու պաշտօն պիտի ունենար։ Արփիարին ալ յանձնելու էիք այդ միւլեւոյն դատարանին...»

Յայտնի կը տեսնուի թէ պ. Փափազեան ինքն է որ շարաչար կը սըխալի ինձի վերադրելով սխալ մը գործործած չեմ։ Արփիարը յանձնած եմ այդ դատարանին։

Լծնտուն (անթւական)

«... Բացարձակապէս որոշեր են որ մինչեւ պատուոյ ատենանին վճիւր շարձակուի, ուէ համաձայնութիւն անկարելի է միութեան համար. նոյնիսկ բանակցութիւնները չեն կարող բուկսիլ։ Աղեքսանդրիա երկու կուսակցութեան մասնաձիւղերը կուզէին լսարան մը հիմնել, իր սկզբնաւորութիւն եղբայրակցութեան բայց մերժեցին որ միմեք են այդ գաղափարը, կեդրոնը յայտարարելով որ մինչեւ արփիարի խնդրին լուծուիլը որ եւ է խնդրի համար որ եւ խնդրի համար անկարելի է համաձայնութեան յանդիւր, որքան որ պզտիկ ըլլայ այդ խնդիրը...»

Ա. Արփիարեան

Այս նամակը չի ապացուցաներ վարչիչներու մեծամասնութիւնը։ Ահա մինչեւ ուր հասած էին, եթէ հայ մը որ դաշնակցական է, ուզէ լսարան մը հաստատել ուրիշ հայու մը հետ որ հնչակեան է, Կ. վարչութիւնը կը միջամտէ իսկոյն այս ազգային եւ անհաստատելի արդիւնքով համար։

«Ինչ որ հնչակեան, չե՞ս ամշնար։ Լսարան մի։ Չես գիտեր որ նոյն Արփիարին խնդիրը լուծուելու է եւ յետոյ դուք ուզելու ես կրթելու կամ կրթելու օրինակները։

Չգացած ըլլալով սկիզբէն իսկ հնչակեան վարչիչներուն այս նեղ միտքը եւ նեղ հոգի տրամադրութիւնը, փութացած էի իրենց գրել շատ կանուխէն։

«... Չը պէտք է որ հիմնելք պն. իսկէնտէրի եւ Յակոբեանի նամակին զոր ես ինքս իսկ խմբագրած եւ հրատարակած եմ, կարծելու համար թէ դուք հնչակեանները կրնաք անճատել Արփիարի խնդիրը միւս խնդիրներէն, եթէ այդպէս գործէք, դուք զբաղած կրիաք Արփիարի դատին հարցով, մինչքեզ գործը Արփիարին վեր է եւ միակ հարցը որ կայ եւ որով ես կուզեմ զբաղիլ այն ալ միութեան հարցն է...»

Դարձեալ 4 մայիս 900

«... Երբոր միութեան պայմանները ընդունիք ամբողջօրէն, ընդունած կը լինիք նաեւ, դուք երկու կուսակցութիւնները, դատարանի մը կազմութեան սկզբունքը Գալով այդ սկզբունքին գործադրութեան, այսինքն դատարանին, այդ ալ ապահովուելու է։ Գիտէք որ երկու կուսակցութիւններէն ամէն մին իր յատուկ լրագործները պիտի ընտրէ, որոնց մէկ պաշտօնն ալ է դատարանը կազմել եւ դատաստանը ընել տալ։ Անվտանգ է,ք միթէ հիմակուրնէ ձեր ընտրելիք հնչակեան լրագործներուն, իբր ճշմարիտ յեղափոխական աշխատելու էր որ ոչ մէկ կուսակցութիւնը եւ ոչ միւսը չենթարկուի դատապարտութեան մը հաւանականութեան, այլ դատի հանել միմիայն հնչակեան անհատները եւ դաշնակցական անհատները — ինչ որ կարելի է միութեան հետ զուգընթացաբար։ Միութենէ անաջ ուզել դատել այդ կը նշանակէ կուսակցական կռիւ մը շարունակել եւ զիրար խորտակել...»

Հնչակեան վարչիչները շարունակեցին ինձի պատասխանել, նախ Արփիարի եւ յետոյ Աղք. Միութիւն եւ Յեղափոխութիւն։

Հոս կը վերջանայ բանակցութեանը առաջին մասը, կայ երկրորդ մաս մըն ալ, բայց այսքանով իսկ հնչակեան պայդ անդամները եւ հայրային կարծիքը կրնան ձեռնարկել դատելու հնչակեան մէկ քանի վարչիչներուն ընթացքի միութեան համար ըրած այս փորձին մէջ։ Ըստ իս անկեղծութիւն չրկար եւ ոչ ալ նամանա անդ լրջութիւն։

Այս ընթացքը գրեթէ կատակերգութիւն մը եղաւ որ վարպետ խազ մը խաղալու օրժանիքն ալ չունեցաւ։ Ընդունեցէք պ. խմբագրապետ, յարգանքս հաւաստիքը։

Մեծիմար

ԱՆԱՀՆՏԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ

— 0 —

Խմբագրութիւնն բազմաթիւ նամակներ կատանայ Անահիտի ուղղութեան փոփոխութեան մասին. այդ նամակներուն հիմը կը կազմէ այն, որ Զօպանեան շահի տեսակէտով միայն ղեկավարուած կը ճանչնայ իր նախկին սխալները եւ այսօր յեղափոխութեան պաշտպան կը հանդիսանայ, չը նայած իր տարիներով հակառակ քարոզածին։

Երբ Զօպանեան սխալ կը գատէր, այն ժամանակ կը մեղադրուէր որ սխալ դատողութիւնները իր սեփական մտքին արտայայտութիւնը չէին, այլ այս ու այն անձին ներշնչման արդիւնք, որոնցմէ Զօպանեան շահ մը կապասէր. երբ այսօր Զօպանեան սկսած է աւելի ուղիղ գատել, հիմայ ալ կը մեղադրուի ուրիշ ակնկալութիւններու մէջ։

Ուրեմն ինչ ընէ Զօպանեան, նորէն հին ճամբան բռնէ՞. նորէն պատասխանատուներ՞ յոգուածին հիմերու վրայ դնէ իր հրապարագրական գործունէութիւնը, որպէսզի հաստատուն գաղափարի տէր մէկը ճանչնուի։ Ընդունինք, որ Զօպանեան աննկարագիր մէկն է, հազար ու մէկ ըրողական պակասութիւններով օժտուած, ինչպէս կուղեն ցուցնել գայն կրքով քննադատողները, բայց ի՞նչ իրաւունք ունինք վայն, այսօրուան աւելի ուղիղ դատելուն համար հալածել։

Ամենէն մեծ պատժիք Զօպանեանի համար այն պիտի ըլլայ, որ առ այժմ ամէն մի զուտ յեղափոխական անհատ կամ մարմին կասկածանքով պիտի վերաբերուի դէպի Զօպանեանի արտայայտած մտքերը, անոր նախկին դատողութիւնները աչքի առաջ ունենալով, ոսկայն ոչ ոք բարոյական իրաւունքը ունի կատաղաբար վայն հալածելու իր բռնած նոր ուղիին համար։

Ինչու չը կարծել, որ Զօպանեան իր մտին եղած քննադատութիւններէն զօրեղապէս ազդուած՝ եղբակացութեան անդեցաւ որ ինքը կը սխալէր։ Գճարժում՝ Զօպանեանի պաշտպան երբէք չէ եղած, այս օր ալ միտք չունի ըլլալու, սակայն վայն իր լիկ նոր մտածելու եղանակի շարժառիթի մասին կատակածելու պատճառը, կատաղաբար հալածելու միտքը երբէք չունի։

Ճարժումի համար Զօպանեան իբրեւ անհատ, այսօր նոյնն է, ինչ որ առաջ էր. սակայն մէկ առաւելութեամբ, այսօր հրապարակաւ կը ճանչնայ իր սխալուած ըլլալը յեղափոխութեան քննադատականներու մէջ։

Մտիւ ժրնէվ Կարգողի Յանձնաժողով

Այսօր ճարժում կրկին պատարաստ է Զօպանեանի պակասութիւնները մտաւոր յողաւորներ հրատարակել, սակայն միայն այն պայմանով, որ այդ յողաւորները առանց կրքի ըլլան եւ դրական պակասութիւններ մտնան ընեն։

Զօպանեան կուզէ շտկուիլ, իր սխալները քաւել, ու թող քաւէ։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Նոյեմբեր 22ի, վեներտիկէ Ս. Ղազար վանքին մէջ, կարճատեւ հիւանդութենէ մը յետոյ իր մահկանացուն կնքեր է հայր Ղևոնդ Ալիջանը։ Հայր Ղևոնդ հոչակաւոր էր ոչ միայն հայերուս մէջ, այլ և Եւրոպացիներու. Եւրոպական բազմաթիւ գիտնական հաստատութիւններու անդամ էր տաղանդաւոր վարդապետը։

Յուշուած կըլ ցաւակցինք հայր Մխիթարեաններուն այդ մեծ և անփոխարինելի կորստին համար։

Կաթուղիկոտ Խրիմեան Թիֆլիսէն էլ միտածին վերադարձեր է, — էջմիածինը որոշած է վտնքին բոլոր կալուածները մասնագէտներու յանձնել կառավարելու համար։

— Մոսկվայի և Բեդերսպուրկի հայ գաղութները կատարել են Լազարեան ճեմարանի հիմնադիր կոմս Լազարեանի մահուան հաշիւերամեակը։

— Հայ ուսանողներն ալ մասնակցած են այդ հանդէսին, Տիկին Աբամելիք Լազարեան հազարուպի նուիրէր է աղքատ ուսանողներու համար։

— Բեդերսպուրկի հայ ուսանողութիւնը կը պատրաստուի աւելի շքեղ կերպով կատարել հայկական երեկոյթը։

Պիտի մասնակցին տաղնա կարգ դերասաններ։

— Ռուսչւրքի հարուստ բարեգործ Սարգիս Կոյուճեան Ռուսչւրքի ազգային երկսեռ վարժարաններու այս տարուան փայտը և ածուխը մտտակարբեր է։

Դպրոցներու հոգաբարձութիւնը իր շնորհակալութիւնը կը յայտնէ նուիրատուին։

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է գիտնել հետեւեալ հասցէով. Իւնիսն Տէ. Չիլիսիան Արւ. Լիօնի քա. Վիֆոյ քա. Երև. 2

Մտիւ ժրնէվ Կարգողի Յանձնաժողով

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

Ե. Տիգրան ձգնաւորեանի (*)
 Կը ձգնորհաւորեմ ձեր Ռօշիլ
 դէմը աւելի հարուստ միտքը :
 Ու պարաք կը զգամ տուամի
 մը վերջին վարագործը գոնէ հրա-
 պարակաւ խաղալ ձեզ հետ :
 Դուք ձեր ստեղծութեամբ, ես
 իմ Ղազարոսէն աւելի աչքաւ
 մտքով :
 Կը խնդրեմ, հետեւեալ երկու
 հարցումներու պատասխանը
 հրատարակուի :
 Զեր բարեկամ և հայրենակից
 Յակոբ Գուրգէնեանի արտասահ-
 մանի մէջ թուրք տառերով թերթ
 մը հրատարակելու (*) և Հ. Նէֆ-
 քի թուրք ստորագրութեամբ
 ժէօն թուրքերէն 50 ֆրանք կոր-
 զելուն վրայ ի՞նչ համոզում ունիք :
 Հանրային տեսակէտով, իմ ան-
 հատականիս կամ ու է բարայա-
 կանիս վրայ ի՞նչ գիտէք :
 Որչափ ալ աննպատ ըլլայ ին-
 ծի համար կարծիքնիդ աննպա-
 տաւ ըսէք հրատարակաւ :
 Զեզի պատուոյ խօսք կուտամ,
 որ դատարան չի պիտի գիտեմ :
 Յ. ԽԱԶԻԿԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Կառավարութիւնը յաջողած է
 սրբազան կարգովնը ճամբու
 դնելու, ծախքին համար փոխա-
 առութիւնը ընել :
 — Բարձր. Դուք կը պատ-
 րաստուի մեծ պետութիւններուն
 ծանուցադիր մը զրկել, առա-
 ջարկելով զոր այսուհետեւ պետու-
 թիւնները չը միջամտեն թրքա-
 կան ներքին գործերու մէջ, մա-
 նաւանդ բարենորոգումներու վե-
 րաբերմամբ :
 — Հովաքանոր պետութեանց
 դեռպանները Բ. Դրան հաղոր-
 դած են որ ձիրենց կրէտէի մա-
 սին ունեցած խորհրդակցու-
 թիւնները, կղզիին ներքին
 գործերուն կը վերաբերին :
 — Քօնստան Գոլիս հասեր է և
 փառաւոր կերպով ընդունուեր է
 Սուլթանի պաշտօնեաներու կող-
 մէն :
 — Միւնիք պէյ ազգէն Բարիզ
 ուղեւորուէր է իր դեսպանական
 պաշտօնը ստանձնելու :

(*) Թէ ի՞նչ նպատակաւ հրատարա-
 կած է այդ վերջը պիտի պարզուի : Հ.
 Մենք զիջանում ենք Տիգրան
 ձգնաւորեանին ուղղեալ նամակը
 պապարել չ'միտայն նրան բոլորովին
 գիտակալաբար անկու համար : ԽԱԶԻ.

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Իօհանէսպուրկի մէջ խռովա-
 րարութեան մէջ մեղադրուած
 Մայէր և Վիրնիք դատապա-
 տուեր են, մին ջկեանս բանտար-
 կութեան իսկ միւսը հրացանի
 բռնուելու :
 — Պէր Կոմանտան ժուպէր իր
 վատշով միասին գերի բռնուեր
 է անգլիացիներէ :
 — Անգլիական կառավարու-
 թիւնը կը յայտարարէ որ Բանա-
 տա 600 զինուոր պիտի զրկէ
 Թրանսվալ :
 — Լահէի միջազգային միջ-
 նորդ քստարանը իր իրաւունք-
 ներէն վեր կը համարէ միջու-
 մտելու Անգլո-Թրանսվալի վէ-
 ճին :

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն

Սաղին անգամ ուսանողները
 ատրճանակ արձակեցին զինուոր-
 ներուն վրայ :
 — Արքայական պալատի առջև
 ցոյց ըրեր են և ուլեր են թա-
 գաւորը տեսնալ :
 Զօրավար մը ընդուններ է
 պատգամաւորութիւնը յայտներ է
 որ ինք թագաւորին կը հաղորդէ
 ցուցարարներու պահանջները :

Ս Ե Ր Պ Ի Ս

Տպագրական նոր օրէնքով պի-
 տի պատժաւին օտար վեհապետ-
 ներու և դիւանագիտական մար-
 միններու վրայ յարձակուող թեր-
 թերը :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Փոխառութեան խնդիրը կար-
 գադրելու համար Բարիզէն Սօ-
 ֆիա բանքային ներկայացու-
 ցիչներ եկած են :
 Փոխառութեան դէմ է մամու-
 լին և երեսփոխաններուն մէկ
 մասը :
 — Մակեդ. Բ. Կոմիթէի ներ-
 կայ նախագահ Միխաիլովսքիյ
 Սօֆիայի մէջ գօնֆէրանս մը ունե-
 ցեր է. չափազանց խիստ լեզու
 գործածեր է Մակեդոնացիներուն
 և նախկին Կոմիթէի նախագահ
 Սարաֆովի և իր ընկերներուն
 դէմ :
 Հարցաքննիչ դատաւորը ար-
 դէն սկսած է մեղադրուող նախա-
 րարները հարցաքննել :
 — Պուլկարական մամուլին մէկ
 մասը յարձակողական գիրք
 բռնած է Մակ. Կոմիթէի ներկայ
 վարիչներուն դէմ : Բանի մը
 մասնաճիւղեր հրատարած են Բ.
 Կոմիթէի հետ գործ ընել և նոր
 համաժողով հրաւիրել կը պա-
 հանջեն :

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

—(II)—

Վ Է Ս Է Լ Օ

Այս գիշեր Վէսէյօ հայ գերա-
 սանական խմբին կողմանէ պիտի
 ներկայացուի :
 Վարձուի աւագակները :
 տրամ. քօմբաի 5 արար
 ծիծաղաշարժ զուեշտ մը
 Վազը կիրակի գիշեր պիտի
 ներկայացնեն :
 Գ. ԶՈՒՀԻՆ
 Կատակախաղ 4 արար
 Նոր եկող իտալական երգե-
 ցիկ խումբին կողմանէ երգեր եւ
 պարեր :

ՅԱՅՏԱՍԱՐՍԻԹԻՆ

Ֆիլիպէի «Հայկական երգեցիկ
 խումբը» աւ շրջանին մէջ վերա-
 կսած ըլլալով արգէն իր պա-
 րտաւորութիւնները, ձեռնարկած է
 նաեւ պարբերաբար հրատարա-
 կելու եւրոպական ձայնագրու-
 թեամբ հայկական հին եւ նոր
 քառաձայն երգեր, մաքուր թղ-
 թի վրայ. յստակ վիճագիր :
 Այս առթիւ երգեցիկ խումբի
 վարչութիւնը ներկայիս կը յայտ
 նէ Պուլկարիոյ և արտասահմանի
 երաժշտասէր հայ երիտասարդու-
 թեան, որ եթէ առ երգերէն
 փափագողներ կան, հաճին գի-
 մել վարը նշանակուած հասցէին՝
 վճարելով «մէկ թուղթին» հա-
 մար 20 սանթիմ. փոստի ծախսը
 մեր վրայ : Կան երգեր որոնք
 մէկէ աւելի թուղթերէ կը բաղ-
 կանան :
 Արտասահմանի համար 35 սնթ.
 Ֆիլիպէ վարչ. «Հայկ. երգե-
 ցիկ խումբին» :

Հասցէ՝ Agop Sivadjian Philippopje

ՅԱՅՏԱՍԱՐՍԻԹԻՆ

Հայկերեղբորում հիմնել է մի գրա-
 դարան, որ նպատակ է գրել ծանօթա-
 ցընել արտասահմանի հայ ուսանո-
 ղութեան և ընդհանրապէս հետաքր-
 քըող անձանց հայոց ներկայ կեան-
 քին վերաբերեալ հայերէն եւ օտար
 լեզուով լոյս տեսած գրքերի հետ :
 Գրադարանը ունի յիշեալ նպատակով
 հրատարակած գրքերի մի համաստ թիւ
 որի համար յայտնում ենք նուիրա-
 սու անձանց մեր խորին շնորհալա-
 լութիւնը եւ խնդրում ենք այն
 անձանց հա տատութիւններին,
 որոնք կամենում են գրքերով եւ
 նւիրատուութիւններով օգնել գրա-
 դարանին, բարեհաճին ուղարկել
 հետեւեալ հասցէով՝

A. Iohannessian Heidelberg Kaiser 31 № 5

Կ Ա Ղ Ա Ն Դ Չ Է Գ

Նոր լոյս տեսաւ այս գրկոյքը
 արձակ և ոտոնաւոր :
 Հեղինակը զայն գրչի գրօսանք
 անուանած է, և իրաւ ալ գրչի
 զրօսանք է :
 Գինն է 40 սնթ. կը ծախուի
 Վարնայի մէջ Զարպհանէլեան
 գրատունը :

Ա Ձ Ի

Բաղէշի կուսակալութեան պատ-
 կանեալ Յուրդափ գիւղէն Պէկօ
 Ասատուրեանի, հաստատակազմ
 շէկ պէխով ու յօնքերով, 6 ա-
 միսէն ի վեր ուր լինելն անյայտ
 է զայն եթէ ճանաչողներ կան
 յանուն մարդասիրութեան թող
 իր այրի տիկին մայրը միթիւ-
 րել հաճին, անոր ուր գտնուիլը
 խմբագրութեանս հաղորդելով :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. «ՇԱՐԺՈՒՄ»-Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ
 այցետոմս, հասցէտոմս, նամա-
 կագրուի, հարսանեկան հրաւի-
 րագիր, մահազդ :
 Գիները յոյժ դիւրամատչելի :
 Ուրիշ քաղաքներէ եկած
 յանձնարարութիւններ ճշդու-
 թեամբ և փութով կը կատար-
 ուին :
 ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԻՆԵՍԻԿ

Ա Ձ Դ

Կը ծախուի 1896ին փետր. 2ին
 իշխան Պօրիթի մկրտութեան առթիւ
 տպուած գործածուած նամակագրոյժ-
 ներ 1—5—15—25 սանդիմ :
 Դիմել ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԱՆԸ
 Վառնա

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Յ. Կ. ՊՕՆՃՈՒԲԱՆԻ
 Նոր Ընթերցարան (պատկերազարդ)
 Առաջին տարի
 (երկր տպագրութիւն բարեփոխ-
 ւած) Գին 70 Սնթ.
 Կը ծախուի Վառնայ Մ. Գալրակ-
 ճեանի քով :

Отговорникъ:

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна